## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Նիւթի չափազանց առատութեան շնորհիւ այս համարը ևս դուրս եկաւ աւելի ստուար, քան խոստացել էինք։ Տեղի պակասութեան պատճառով այս համարում չը կարողացանք զետեղել Մ. Մամուրեանի և Ս. Տիւսաբի կենսագրութիւնները։ Բացի այդ, ստիպուած եղանք հանել մի քանի յօդուածներ («Գրականութիւնը Ռուսահայերի մէջ» և մի քանի գրքերի մատենախօսութիւն) և չը տպագրել «Նամակներ Արտասահմանից» բաժինը։

Խմբագրութիւնս ուրախութեամբ նկատում է, որ «Մուրճ»-ի հէնց առաջին համարի լոյս տեսնելուց յետոյ շատ զգալի կերպով սկսուեց աւելանալ բաժանորդների թիւը։ Թէև դեռ հեռու ենք բաժանորդների այն թւից, որ անհրաժեշտ է ամսագրի գործը մեր մէջ կանոնաւոր տանելու համար, սակայն առաջին համարին հասարակութեան ցոյց տուած համակրութիւնը յոյս է տալիս մեզ, որ անիրագործելի չէ անցեալ համարում մեր բերած համեստ պահանջը։

---

## Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

**Պարիզ.** Մ. Ց.—Ձեր յօդուածը անկարող եղանք տպել։
**Մօնպելիէ.** Մ. Մ. Չի տպուի։
**Լօզան.** Ա. Ա.—Իր ժամանակին ձեզ ուղարկուած է «Մուրճի» № 1։
**Մոսկուա.** Խ. Ց.—Առանց գրուածքը կարդալու, ոչինչ չենք կարող ասել։
**Կիեվ.** Մ. Ղ.—Ամեն մի գրուածքի համար խմբագրութիւնը անկարող է նամակագրութիւն սկսել հեղինակների հետ։ Ոտանաւորները չեն տպուի։
**Բագու.** Ա. Վաչեան.—Ձեր 20 ռուբլով ուղարկւում է «Մուրճ» Ծընեվլի ուսանողական գրադարանին և Մեղրի գիւղի հասարակութեան։
" Մ. Տէր-Անդրէասեան.—Ձեր 10 ռուբլով ուղարկւում է «Մուրճ» Ներքին-Ագուլիսի հասարակութեան։
" Գ. Տէր-Մարգարեան.—Ձեր 20 ռուբլով ուղարկւում է «Մուրճ» Երիցվանքի դպրոցին և Երևանի Գայեանեան դպրոցին։
**Մոսկուա.** Մ. Ապրէսեան.—Ձեր 10 ռուբլով ուղարկւում է «Մուրճ» Բանանց գիւղի հասարակութեան։

---

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

«Մուրճի» յունուարի համարում մտել են ի միջի այլոց հետեւեալ վրիպակները.

1) **«Հայագիտութիւնը» յօդուածում.**

| Երես | տող | տպուած է | պէտք է լինի |
| --- | --- | --- | --- |
| 158. | 11 | *եօթանասնական* | *չինական* |
| 167. | 10 | *կը լինի նա, Մովսէս* | *լինի նա Մովսէս* |
| „ | 14 | *փառաբանող* | *փաստաբանող* |

2) **Մատենախօսութեան մէջ.**

| | | | |
| --- | --- | --- | --- |
| 204. | *ծան. մէջ* | *Տաղաւարեանի* | *Տէմիրճիպաշեանի* |
| 206. | 19 | *բառարանի* | *բառարանների* |
| „ | 32 | Ervoyeur | Envoyeur |
| 209. | 17 | *դադարան* | *դադարոն* |
| 210. | 6 | Formidaple | Formidable |
| „ | 7—8 | *փութաշարք* | *փութաջան* |
| „ | 33—34 | *կատակութիւնը, եթէ* | *կատակութիւնը մի բառարանի մէջ, եթէ* |
| „ | 36 | *դատապարտելի՝ մի բառարանի մէջ։* | *դատապարտելի* |
| 212. | 3 | (*զօրինաւոր*) | (*չօրինաւոր*) |